ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սևան քաղաք, Սևան համայնք, *24.05.2023թ.*

Սույն թվականի մայիսի 24-ին, ժամը 11.00, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի, Սևան քաղաքի քաղաքապետարանում, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ 12-րդ, 13-րդ հոդվածների, 16-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի և ՀՀ կառավարության 2015թ. նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» N1325-Ն որոշմամբ սահմանված կարգով, տեղի ունեցավ «ՖՈՒԼ—ԼԱՅՆ» ՍՊԸ կողմից ձեռնարկվող ՀՀ Գեղարքունիքի մարզի, Սևան համայնքի, Սևան քաղաքի, Երևանյան խճուղի 26 հասցեում Ճաշարան-բազմաֆունկցիոնալ շենքի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի և փորձաքննության վերաբերյալ հանրային քննարկումների երկրորդ փուլը:

Ներկա էին համայնքապետարանի, համայնքի բնակիչներ, ձեռնարկողի, խորհրդատվական կազմակերպության ներկայացուցիչներ, շրջակա միջավայրի նախարարության փորձաքննության կենտրոնի փորձագետը (մասնակիցների ցանկը ստորագրություններով և տեսաձայնագրությունը կցվում են արձանագրությանը):

Բացման խոսքով հանդես եկավ Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջատար մասնագետ Հայկ Ղուկասյանը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ Աննա Սարգսյանը հակիրճ ներկայացրեց Սևան քաղաքի, Երևանյան խճուղի 26 հասցեում Ճաշարան-բազմաֆունկցիոնալ շենքի վերակառուցման միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով իրականացված միջոցառումները:

Նախագծային կազմակերպության ներկայացուցիչ Վահան Ենոքյանը հակիրճ ներկայացրեց գոյություն ունեցող շինության վերակառուցման նախագիծը:

Ծավալվեց քննարկում ներկա գտնվող անձանց և կազմակերպությունների միջև: ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչ Մարտին Պետրոսյանի կողմից բարձրացվեց հարց ջրամատակարարման և ջրահեռացման կազմակերպման վերաբերյալ:

Նախագծողի կողմից ներկայացվեց, որ ջրամատակարարումն իրականացվում է ,,Վեոլիա ջուր,, ՓԲԸ-ի հետ կնքված և գործող պայմանագրի համաձայն, իսկ ջրահեռացումը՝ ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի «Սևան» ազգային պարկի և դրան հարող տարածքներում հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման և քաղաքաշինական գործունեության իրականացման մասին,, թիվ 1563-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ բացառապես մաքրման կայանի միջոցով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ Աննա Սարգսյանի այն հարցին, որ շինարարության ընթացքում անհրաժեշտ բետոնը ինչպես է պատրաստվելու, կառուցապատողի ներկայացուցչի և նախագծողի կողմից տրվեց պարզաբանում, որ բետոնը և շաղախը շինհրապարակ են տեղափոխվելու շինարարական օբյեկտից մոտ 10-12կմ հեռավորության վրա գտնվող բետոնի պատրաստման արտադրամասից՝ մասնագիտացված բետոնախառնիչ և բետոնամղիչ մեքենաներով:

Ներդրումների, օբյեկտի շահագործման, աշխատատեղերի ստեղծման վերաբերյալ և այլ բազմաբովանդակ հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ:

Քանի որ դիտողություններ և առաջարկություններ չեղան հանրային լսումների արդյունքում, մասնակիցները որոշեցին՝ հավանություն տալ Ճաշարան-բազմաֆունկցիոնալ շենքի վերակառուցման աշխատանքների նախագծին և նրանում ներառված բնապահպանական միջոցառումներին և փակեցին նիստը: